ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 690 -Ա

04 նոյեմբերի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 645-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի, 34-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 1-ի N 2629-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 25-ի «Երեմ Քարամյանի Ֆրանսիայի Հանրապետություն մեկնելու վերաբերյալ» N 645-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետի «պատվիրակության գործուղման հետ կապված կեցության և տեղափոխման ծախսերի հատուցումը կատարվելու է հրավիրող կողմի միջոցների հաշվին:» բառերը փոխարինել «ծախսերը՝ սննդի, գիշերակացի և տեղափոխությունը Լիոնից Իզեր, կատարվելու է հրավիրող կողմի միջոցների հաշվին, իսկ պատվիրակության ուղևորափոխադրման ճանապարհածախսը՝ Երևան-Ֆրանկֆուրտ-Լիոն և հակառակ ուղղությամբ՝ Լիոն–Վիեննա-Երևան, իրականացվելու են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին պետական բյուջեով գործուղման ծախսերի համար հատկացված միջոցների հաշվին:» բառերով:

2) որոշումը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել հրամանից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:»:

04.11.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 4710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ